# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

0010, ՀՀ, ք. Երևան, Զաքյան 7-2
Հեռ.՝ (+374 10) 600 701, 600 704
Հեռապատճեն՝ (+374 10) 600 703
Էլ-փոստ՝ info@advocates.am
Կայք՝ www.advocates.am


N 01/05/1379-19
«30» 10 2019թ.

ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Ռուստամ Բադասյանին

Հարգելի պարոն Բադասյան,

Դեռևս 15.08.2018թ. ՀՀ փաստաբանների պալատը գրությունն է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարությանը ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին և առաջարկել լրացնել ՀՀ քրեական օրենսգիրքը «Փաստաբանին իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելը» հանցակազմով:

ՀՀ փաստաբանների պալատը բազմիցս հայտնել է իր դիրքորոշումը փաստաբաններին իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնելու առնչությամբ վիրավորելու անթույլատրելիության վերաբերյալ, սակայն այդ գործելաոճը ցավոք չի դադարել, ինչի մասին է փաստում նաև Ռոբերտ Քոչարյանի փաստաբանների գրությունը:

Վերոգրյալը հաշվի առնելով խնդրում ենք միջոցներ ձեռնարկել վերը նշված օրենսդրական փոփոխությունների առաջարկության իրագործման վերաբերյալ:

Առդիր՝

1. ՀՀ փաստաբանների պալատի 15.08.2018թ. գրության պատճենը.
2. Ռոբերտ Քոչարյանի փաստաբանների գրության պատճենը:

Հարգանքով՝
Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ
Արա Զոհրաբյան

31/10/19թ.